

սով եւ քահանայով օգը
չեմ սպառնար, որպէս

մանկանի պէս մարդու պատիւ ,
փոխանակ ի դոտ օձիք ունենալու
50 ֆրանք չորթիլէ ետք :

Նոյնպէս տոտապետ մըն եմ ,
ու Ղուկասեանց գրաշարին ալ
« քարերար » , վասնզի 15 ֆրանք տո-
կոսով երեք ամիսէն վճարելի « պո-
նո » ի մը փոխարէն 40 ֆրանք ին-
ծի տուած է թուղթ սըն ալ ստորա-
գրելով — դոր պահած է եմ — թէ « ու-
րիշ ոչ մէկ առնելիք ինձմէ չունին » :
Կըմբռնուի թէ ինչ « բուլկարահայ »
իդիօք » մը , ու « տառապետ » մըն
եմ որ 40 ֆրանքի համար 15
ֆրանք կուտամ , փոխանակ Պա-
մանանի պէս 8 . Վառձապուհը
ու Լեկիզեցին օղը հանել սպառնալու
կամ Վարդոյ ին պէս Վանեցի
ճաշարանատէրեր օրանքը մը ընկու ,
վեց ամիս ուտել խմելէ ետք :
Ինչ « բուլկարահայ » իդիօք » :

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

Պատանիներու դաստիարակութիւնը
տարակոյս չկայ թէ պէտք է ըլլայ
ծնողաց ամենամեծ հոգը :

Ահաւասիկ այս մասին քանի մը հը-
րահանգիչ ու օգտակար խորատեսի , զո-
րս կը գտնենք նամակին մէջ հօր մը ,
որ իր օրգին արտասանման զրկած է
ուսանելու :

— Մեր ներսիքին անողորմելի դատա-
ւոր մը կայ , խիղճը , պէտք է միշտ
անոր մտիկ ընես եւ անոր կամքին
հակառակ բան մը չը գործես :

— Խելացի մարդոց ընկերացիր , եւ
ամեն ուր որ կը խօսուի մարդուս եր-
ջանկութեան , « գաղտնիքս » , արիւն-
թեան , իր պարտքը կատարելու եւ ին-
ժաման , լաւ ունկնդիր եղի :

— Դիւրաւ մը վստահիր ամէնուն .

— Միայն նախ խելացի որ կը ճանչ
նայ իր անկատարելութիւնը :

— Միւլիկ ուրիշներուն ոտքվեցնել
բան մը զոր դուն ինքդ լաւ տեսած
չես :

— Յիշէ թէ լաւ բնաւորութիւնն ա.
ռաջին պէտքի բանն է բարեկիրթ
մարդուն :

— Հոգ տար մարմնոյդ ինչպէս նաեւ
հոգիդ համար :

— Պատուաւոր եղիր :

— Յարգէ իշխանութիւնները , ինչ-
պէս նաեւ օրէնքները :

— Ուրիշներու գործերուն ու խօս-
քերուն մի խառնուիր , այլ գիտցիր
բու պարտքդ կատարել :

— Նուաճառարար մի փաղտըշիք ու-
րիշները , ինչպէս թոյլ մի տար որ զքեզ
փաղտըշես , որովհետեւ կան մարդիկ
որ կը քննեն , ինչպէս չուն իր արդ-
ատուններուն :

— Փոխ մի առներ ոչ մէկէ մը եւ ոչ
խակ ստակ մը , զի փոխառութիւնը
նուաճառարանցիկ է մարդու արժանա-
պատուութեան , եւ թիկնամտորէն
ինքդ ալ փոխ մի տար :

— Հպարտ եղիր , այլ ոչ մեծամտ :
Արդարագատ եղիր եւ օգնէ անոր , որ
պէտք ունի օգնութեան :

Անգղիացիք չեն ծածկեր իրենց
համակրութիւնը գէպի ճարտարներու
Այս ձեռք Լոնտոնի մէջ կ'ըլլայ մը
ճարտարներ ճարտարական խոհանոց
սկսած են սարքել , ամեն ճարտա-
րութիւնին ի գործ կը դնեն ճա-
րտարական խորտիկներ պատրաստելու
համար : Նորայի կարգ անցած այդ
ճարտարներուն մէջ իւրաքանչիւր
հրաւիրեալ առանձին սեղանի մը
առջեւ կը բազմի , ճարտարացիք
բաղկացած է ձուկի ապուրէ , միտէ
բանջարեղէններէ եւ այլն , այս կի-
րակութիւններուն ամէն մէկը եր մա-
տուցուի սիրոյն ճեմապահեայ վը-
րան զոց պնակներու մէջ : Ասկէ
զատ , հրաւիրեալներուն կը տրուի
մէյմէկ թղթեայ անձնոց եւ փոյտ
եայ գաւազանիկ մը , որ պտտուա-
քողի անդ կը բռնէ :

Ճարտար գինուորներն ունին իրենց
բաւական հետաքրքրական հանգանակը :
Ահաւասիկ անոնց մէկ քանի հաւա-
տալիքները , իբր նմոյշ :

Ո՞վ է ձեր հրամանատարը .

— Կայսրը . — ինչ բանի մէջ կ'ար-
տայայտուի զինուորական ոգին :

— Հպատակութեան ու ինքնագո-
հութեան մէջ :

Ինչ բանի մէջ կը կայսրայ ամե-
նարար զինուորական արիւնթիւնը .

— Անոր մէջ թէ պէտք է յառաջ
երթալ միշտ առնուի եւ է արդիւքի
նայելու :

Ո՞րն է զինուորին համար ամենէն
նուաճառարանցիկ բանը .

— Անգիւնութիւնը .

Գեակն թէ ուրկէ է այն արիւնը
որով կ'արմիր ներկուած է ձեր դրօշը .

— Կուոյ մէջ միտնող զինուորներուն
արիւնն է այն :

Նրբ զինուոր մը կը մեռնի պատե-
րազմի մէջ որ բանն է որ կ'ապրի ան-
կէ ետք .

— Փառքը :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Ի ՆՊԱՍՏ ՈՐԲԱՆԱՄԻՆ

ՍՐՋԱՆ ԿՊՈՒԿԱՐԻԱՆ

1904 թիկ . 9 հինգշաբթի . Ժամը 9 ին
Արտաքոյ կարգի փառաւոր ներկա-
յացուած « Նատէթտա » Հայ գերս . խըմ-
բին կողմէ Լաշարեղութեամբ Պ . Վ .
Պապեան ի եւ ընդ հոգաւարութեամբ
Գործ . Ժողովոյ

Ս . ՊՈՂԱՍ ԵՆԵՂԵՑԻՈՅ

ՃԱՆԿԱԿԱՆԱՐԸ

Բարոյակից եւ պատմական Թատե-
րախաղ մէկ յառաջարկումով 4 արար .

Երգեր եւ պարեր Օրդը . Բաթի-
նայի , Միլլայի եւ պ . Յակոբեանի
կողմէ : Հանդիսականաց հանգստու-
թեան համար բաւ ջանք խնայուած
չէ :

Գիւնճ . — Օրիակ թիւ 1 . 30 ֆր .
թիւ 2 . 3 . 25 ֆր . թիւ 4 . 5 . 20 ֆր .

թիւ 6 . 7 . 15 ֆր . Ա . կարգ բոս
կամս . — Ա . կարգ . 3 ֆր . Բ .

կարգ 2 . Գ . կարգ 1 ֆր . Կալա-
րին 50 սանդիւմ

Գործ . Ժողովոյ ի նկատի ունենալով
ընկերութեան որդեգրած 17 որբերու

ուսմանց եւ արհեստից վիճակացոյց-
ները որոնք ստացածէ որբանոցնե-
րու հոգաւարութիւններէն , որոնցմէ
բացայայտ կերպի որբերու յառաջ-
գիւնթիւնը եւ ընթացաւարտ ըլլա-
լու ընդունակութիւնն . եւ նկա-
տելով որ ընկերութեան անդամոց
բաժնեգրիներ չփոխի բաւեն 17 որ-
բերու ստրկութեանը դուրսն
լրացնելու , ինչպէս ուրիշ անդամներ
պատ . ապագայնք յիշելի նպատ-
տած են ընկերութեան երեկոթ-
ներուն , լիայոյս է որ այս անգամ
եւս ցոյց պիտի տան իրենց պար-
տաճանաչութիւն , սիրտ յօժար մաս-
նակցելով սոյն երեկոթին : Կանխաւ
յայտնելով մեր շնորհակալութիւնը :

Միտմբ Յարգանք

Ի Դիմաց Գործ . Ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ

Ա . Զարպանէլեան Յ . Զանկիլեան

ԱԶԳԱՅԻՆ

Արմաշի Դպրեւանքին վաճա-
հարական փոխանորդ ընտրուե-
ցաւ Տ . Թորգոմ վարդապետ
Խնամակալութիւնը որոշեց այդ
հաստատութիւնը իր առջի պիւտ-
ճեով պահել .

— Դուրեան Տ . Եղիշէ եղիսկու-
պոս 400 ի մօտ գիրքեր նուիրերէ
Արմաշի մատենադարանին :

— Ղարաբաղի թեմին Կոնստի-
դըրիային (առաջնորդարան)
պաշտօնեաներուն գործը էջմի-
ածնի Սինոդին կողմէ քննուելով ,
որոշուեր է Գանձակի նահանգա-
կան դատարանին յանձնել կարգ-
մը պաշտօնեաներ , որոնց մէջ
կան վարդապետ , քահանայ եւ
աշխարհականներ :

— Պաշտօնի վիճակին համար
12 քահանայացուներու ձեռնա-
դրութիւնը յանձնուեցաւ Աղ-
թամարայ Կաթող . Տեղապահ
Տ . Յովսէփ եպ . Խոստիկեանի :

ՆԵՐՍԷՍ ՍՅՏԱՐԱԿԵՑԻ

(Արտաստուած ԲԱԶՄԱՆԿԱՆ հանգէսէ)

Նորանք գնացին սփորեցին եւ վերա-
դառնալով Էջմիածին սկսեցին շաքարի բաղուկ
եւ շաքարիզէն ցանել տալ . եւ ձեռք ար-
ւին գործարանի շինութեան , կաթողիկոսին ներ-
կայացրին զանազան գործիքների ցուցակ եւ նա
գրեց Մոսկուա հարուստ Անանիանցին Էջմիա-
ծին հաշուով գործիքներ ուղարկել . նա չու-
տով հասցրեց պահանջները մինչեւ 3000 ընդ-
լի արժողութեամբ . իսկ ինքն իւր կողմից
նուէր էր ուղարկել շաքարաշինութեան գործա-
ծարանի համար մի մեծ պղինձ , որ մի քա-
նի հարկեր դուր (Վեդո) ջուր էր տանում .
նոյնպէս ընծայել էր բազում քերական եւ ար-
մուլու գործիքներ : Վարդաներն սկսեցին եւ
պատրաստեցին ամենալաւ ըրֆինաթ շաքար , ո-
րից մի փոքր կտոր մինչեւ այժմ պահած ու-
նիւմ : Այդ միջոցին կաթողիկոսը թիֆլիսում
էր . նորան էլ ուղարկեցին այս շաքարից :
Շատ չանցած 1857 թուի փետրվարի 13 — ին
յանկարծ գիշերը վախճանեց կաթողիկոսը . եւ
նորա մահից յետոյ այնպէս շուտ անհետացրին

շաքարաշինութեան բոլոր գործիքներն . որ ո-
չինչ չմնաց , քացի Անանիանցի ընծայած մեծ
կաթնայից . իսկ այժմ այն էլ չի երևում :
Նոյն բաղին վիճակուեց եւ շերամագործու-
թեան գործարանը : Մասթէոս կաթողիկոսի մա-
հից յետոյ Սինոդի անդամների մէջ ոչ բարով
ըստ ձեռնադրութեան եպիսկոպոսական աստիճա-
նի աւագութիւն ունեցողն էր Յովհաննէս եւ
պիսկոպոս Բիշի մականունեալն , որ եւ իբրեւ
նախնադամ կաթողիկոսական տեղապահ եղաւ :
սա քանդել տուեց անտառում շինած շերամա-
գործութեան գործարանն եւ գերանները գործ
ածեց գիւղում իւր բարեկամի համար շինած
տան վերայ : Ներսէսը շատ յորդորում էր միա-
բաններին , որ սովորին անտառութիւն եւ ի-
րանց աշխատութեամբ Էջմիածնի գրութիւնը բար-
ւոքեն : Նա յաճախ ասում էր նորանց , թէ
չէ կարելի որ յոյսներս միշտ դնեք ժողո-
ւրդի նուէրքի վրայ . ժամանակ կը դայ , որ
ժողովուրդը ինքը շատ ծանրաբեռնուած կը լինի
ծախսերով եւ տուրքերով եւ հազիւ կարողանայ
իւր ընտանիքը կառավարել . դուք սովորեցէ՛ք
անտառութիւն , վանքի կառուանքն լաւ դրու-
թեան հասցրէք , անկորուստ սառցէք արդիւն-
քն եւ անկարօտ ապրելուց վատ չքաւորներին
եւ կարօտեալներին ալ օգնեցէք . այլ ոչ թէ
անգործ նստելով աչք անկեցէ՛ք ժողովրդի ձեռ-

նոր—նախնիների քաղաքացուի Յարու-
թիւն Խալիպեանցին յանձնել էր կաթողիկոսն
Էնկեղեցիների երեցփոխանների զբաղմուն
նալ եւ անկորուստ շահեցնել . եւ նա ճշուու-
թեամբ կատարել էր հայրապետի յանձնարարու-
թիւնը . ժողովել էր մինչեւ հարիւր յիսուն
հազար ընդլի : Կաթողիկոսը նախկիններն զը-
րեց , որ հեղհեղեղ այդ գուժարն ուղարկել Էջ-
միածնի Սինոդն եւ ստանայ անդորրագիր , իսկ
Սինոդն ստացած գուժարը պիտի գնէր Ամուրի
գանձարանը : Խալիպեանցն առաջին անգամ ու-
ղարկեց 15 հազար , երկրորդ անգամ տասը
հազար բււրլի : Ղուկաս արքեպիսկոպոսն՝ Սի-
նոդի նախանգամին ինձ կանչեց իւր սենեակն
իբրեւ գանձապահի եւ ասաց . « Ատիպան , ո՞ր-
գի , կաթողիկոսին ասա » , որ Խալիպեանի ու-
ղարկելի գուժարի մասին թող ինքը ստացական
տայ . Սինոդն իրան իրաւունք չէ համարում
ստացական տայ Խալիպեանցին . այդ փողերը
մենք կը ձախտնք յետոյ վիճակի գուժարը
մեզանից կը պահանջեն . բայց այնպէս հասկացուր
կաթողիկոսին որ չը զոյրանայ » : Ներկայացայ
վեհափառին եւ հաղորդեց Ղուկաս եպիսկոպոսի
խօսքերը . նա երբ լսեց զարմացաւ եւ ա-
սաց .

(Շարունակելի)

